

տուել իւր բոլոր հմտութիւնը Հայոց բառագիտութեան մէջ, նրա գրուածքը ներկայացնում է բառախաղութեան և բառերի կուտակութեան մի խառնուածք, որի մէջ մտքերը զոհուել են այդ նպատակին: Բացի ռամկական բառերից և դարձուածներին, նա ունի բառական թուով հին գեղեցիկ բառեր, որ չկան նոր Հայկազեան բառգրքում (Վենետիկ 1837), որոնք ծանօթութիւնների մէջ նշակել ենք:

Յովհաննէս արքայեղբայր եպիսկոպոսի ձեռագիրը գրուած է մեծ խնամքով, հաստատուն կէտադրութեամբ, շեշտերով և առանձին ուղղագրութեամբ, որը մենք նպատակայարմար գտանք անփոփոխ թողնել, որովհետև ճառի ամենազխաւոր արժանիքը նրա լեզուական առանձնայատկութիւններն են: Միայն բաց ենք թողել շեշտերը, կետագրութեան մէջ, ի տեղ դրել ենք . , երբ առաջինը վերջակէտի նշանակութիւն չունէր, Ձեռագրի որևէ բառի փոփոխութիւնը նշանակուած է ծանօթութեան մէջ. ձեռագրի լուսանցքում գրուած են բնագրի դժուար բառերի հոմանիշ բառեր, երբեմն էլ չհասկացած բառը ստորագծուել է. այդ էլ ենք մտցրել ծանօթութիւնների մէջ:

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ.

1897 Թ. յուլիս 15.

Ս. Էջմիածին:

